

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՀՀ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ՝  
2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 7-ին ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում (այսուհետ՝ ԲՊԱԷՀ) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում Հայտերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները: Նշենք, որ 2018թ. մարտի 23-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը ամրագրում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հանդիսանում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավահաջորդը<sup>1</sup>: Այսպիսով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացրել է Հայտերը, որտեղ կան ռազմավարական տեսանկյունից թիրախների հստակ սահմանման, արդյունքային (ֆինանսական և ոչ ֆինանսական) ցուցանիշների՝ որակական ու քանակական տվյալների վերաբերյալ ոչ ճշգրիտ կանխատեսումներ:

### 1. Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

Հանձնաժողովի ներկայացրած Հայտերը չեն բխում Կառավարության քաղաքականության ընդհանուր նպատակներից և թիրախներից, մասնավորապես՝ 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված Կառավարության ծրագրից: **Օրինակ 1**, Հանձնաժողովի կողմից ներկայացված Հայտերի «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում հղում է տրվել Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշման հավելվածի երրորդ գլխին, մինչդեռ անհրաժեշտ էր հղում տալ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրին: **Օրինակ 2**, Հայտերի «Զարգացման միտումները նախորդող միջնաժամկետ հատվածում» անվանմամբ բաժնում բացակայում է ֆինանսական ցուցանիշների մասով գնահատականները, մասնավորապես ֆինանսական ցուցանիշների դինամիկան վերջին երեք տարում: Մույն բաժնում գրված է միայն՝ օրենքը ինչ է կարգավորում, բայց ներկայացված չէ, որ զարգացման միտումները եղել են դանդաղ, որ օրինակ ընդունվել է Ազդարարման համակարգի մասին օրենքը, բայց այս մարմինը դեռ չի ստեղծվել, փաստացի ազդարարման վարույթ իրականացնելու հանգամանքը չի իրագործվել: **Օրինակ 3**, Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հստակ չէ՝ Հայաստանը ռազմավարական տեսանկյունից հակակոռուպցիոն մարմնի ինչպիսի՞ մոդելով է առաջնորդվելու, անհրաժեշտ էր Հայտերում անդրադառնալ այն հանգամանքին, որ Հանձնաժողովի ստեղծման դեպքում հնարավոր են դեպքեր, երբ վերջինիս և կոռուպցիոն պայքար իրականացնող այլ մարմինների լիազորությունները կարող են հատվել: Դեռ ավելին,

<sup>1</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120849> :



պետք է գնահատել, որ բարձր ռիսկայնությամբ օժտված հանգմանք է այն, որ իրավասությունների ոչ հստակ լինելու արդյունքում կարող ենք ունենալ իրավական բացեր: Նման դեպքերը ռիսկային են Հանձնաժողովի բնականոն և արդյունավետ գործունեությունն ապահովելու համար ևս:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1:** Առաջարկում ենք Հանձնաժողովի ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել՝

- Կառավարության ծրագրով<sup>2</sup> և Կառավարության 2019թ. մայիսի 16-ի N650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով: Հիշյալ որոշման N 1 հավելվածով հաստատվել է նաև ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով<sup>3</sup>:
- Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հոդված 1-ի (e) նպատակով, հոդված 12-ով<sup>4</sup> և ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ, որի հավելվածի ճանապարհային քարտեզի «Արդարադատություն, ազատություն և անվտանգություն» վերտառությամբ Մաս 3-ով սահմանված միջոցառումներով<sup>5</sup>:
- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 2-րդ գլխով<sup>6</sup>:

## 2. Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

Հայտերի ծրագրերում սահմանված միջոցառումների համար նախատեսված չեն արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշներ, որոնք պետք է բխեն և համապատասխանեն ծրագրերում սահմանված թիրախներին և նպատակներին:

**Օրինակ 1,** Հայտերի «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում չեն սահմանվել ծրագրի վերջնական արդյունքները՝ հիմնական չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչը հակասում է ծրագրային բյուջետավորման սկզբունքներին և Ցուցումների պահանջներին: **Օրինակ 2,** Հայտերի «Նպատակները եվ թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում նկարագրված չեն ռազմավարական թիրախները: Մինչդեռ անհրաժեշտ է հնարավորության սահմաններում յուրաքանչյուր նպատակի նկարագրության հետ միասին ներկայացնել նաև դրանց գծով վերջնական արդյունքի չափորոշիչներ և թիրախային ցուցանիշներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1:** Առաջարկում ենք օրենսդրական բարեփոխումներ իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում, որպեսզի Հանձնաժողովի գործունեության սկզբնական, ելակետային փուլում հնարավորինս հստակ ձևավորված լինի օրենսդրական դաշտը: Մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառույթները» վերտառությամբ 43-րդ հոդվածի համաձայն ԲՊԱԷՀ-ին վերապահված չէ լիազորություն՝ տալու եզրակացություն պատգամավորի կողմից Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու

<sup>2</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

<sup>3</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝

[https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQNO0h2i0TwCBijS7C9NMEG38\\_fbA5AADHXixEDDY-cY](https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQNO0h2i0TwCBijS7C9NMEG38_fbA5AADHXixEDDY-cY)

<sup>4</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf>:

<sup>5</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/varch/2019/19\\_666\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf):

<sup>6</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.unodc.org/documents/brussels/UN\\_Convention\\_Against\\_Corruption.pdf](https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf):



Հայաստանի  
ԶԶԿ-ների  
Հակակոռուպցիոն  
Կոալիցիա



վերաբերյալ: Քանի որ ենթադրվում էր, որ դրանով պետք է զբաղվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ում լիազորությունների մեջ է քննել և լուծել բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների խախտումների դեպքերի վերաբերյալ դիմումները: Սակայն փաստացի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի ընդունումից ի վեր մարմինը չի ստեղծվել, ուստի անհնար էր որևէ դիմումով ընթացք տալ մանդատի անհամատեղելիության հիմքով պատգամավորի լիազորությունները դադարեցնելու որևէ գործընթաց:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2:** Հայտերի «Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախները» բաժնում ներկայացված չեն արդյունքային ցուցանիշները: Մասնավորապես, անհրաժեշտ է ներկայացնել այն վերջնական արդյունքները, որոնց ձգտում է հասնել Հանձնաժողովը տվյալ ոլորտում և որոնք իրենց հերթին ուղղված են Կառավարության ծրագրով սահմանված կոնկրետ թիրախների և նպատակների ապահովմանը: Ընդ որում յուրաքանչյուր հնարավոր դեպքում պետք էր հստակ հղումներ կատարել Կառավարության ծրագրի համապատասխան դրույթներին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3:** Առաջարկում ենք, որ Հանձնաժողովը՝ որպես հակակոռուպցիոն պայքարում քաղաքականություն մշակող մարմին, ձևավորի բարեվարքության, էթիկայի, հակակոռուպցիոն արժեքների ներկայացման և իրազեկման մեկ համընդհանուր համակարգ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.4:** Առաջարկում ենք, որ 1181 ծրագրի 11002 միջոցառման շրջանակներում հանրային ծառայողների վերապատրաստումներ իրականանացնելը պարտադիր բնույթ կրի: Ինչպես նաև, հիմնավոր չէ, թե ինչպես է որոշվել թվով 400 շահառու նախատեսելը: Անհրաժեշտ է հստակ հաշվարկ կատարել, թե մեկ շահառուի վերապատրաստումն ինչ կարժենա: Ըստ այդմ անհրաժեշտ է կազմել ժամանակացույց, որպեսզի նորարարական եղանակներով և արդյունավետ կերպով կազմակերպվեն վերապատրաստումները, ինչպես նաև պետք է հստակ լինի շահառուների շրջանակը: Կարծում ենք, որ վերապատրաստումները պետք է իրականացվեն՝ հիմք ընդունելով հակակոռուպցիոն միջազգային հաջողված փորձը և կոռուպցիայի դեմ պայքարում արդիական գործիքների կիրառումը, մասնավորապես ակտիվների վերադարձի ինստիտուտի ներկայացումը պետական պաշտոնատար անձանց շրջանակում:

### 3. Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

Հայտերում նախատեսված է իրականացվելիք ծախսերի առավել գերակա ուղղությունները, որոնք ներկայացված չեն կոնկրետ միջոցառումների տեսքով, մասնավորապես առկա են ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվելիք միջոցառումներն ամբողջությամբ պահպանման ծախսեր են իրենցից ենթադրում: Ծրագրերով սահմանված նպատակներին և իրականացվելիք միջոցառումներին համապատասխան՝ անհրաժեշտ է ֆինանսական ծախսերը նախատեսել հստակ, հիմնավորված, ճշգրիտ հաշվարկներով և հնարավորինս իրական կանխատեսումներով: **Օրինակ**, Հայտերի «Ոլորտային ծախսային ծրագրերը և ծախսային գերակայությունները» բաժնում ներկայացված են նպատակներ, մինչդեռ պետք էր ծախսային ծրագրերը նկարագրել՝ սահմանելով նաև ծախսային գերակայությունները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1:** Առաջարկում ենք, որ 1181 ծրագրի «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառման շրջանակներում ոչ թե

